

Գրություն

Ք. Երևան

24.11.2022թ

Սույն գրությամբ «Արթուր Պողոսյան» ԱԶ -ն օրենսդրությամբ սահմանված ժամկետում «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ Է ներկայացնում N ԵՏ-ԳՀԱՊՁԲ-22/09 հայտի շրջանակներում կնքված օտտության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր N ԵՏ-ԳՀԱՊՁԲ-22/09-1 երկու օրինակ, պայմանագրի և որակավորման ապահովումները՝ տրամանքի ձևով:

ԱԶ տնօրեն

Ա. Պողոսյան



2795
24.11.22թ

**«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻԶՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԵՏ-ԳՀԱՊՁԲ-22/09-1**

ք. Երևան

24/11 2022թ.

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ը ի դեմս տնօրենի Ժ/պ՝ Ս. Զալաշյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Արթուր Պողոսյան» ԱԶ-ը, ի դեմս տնօրեն Արթուր Պողոսյան-ի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱԼ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,
բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն և ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինե՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1 329 240 (մեկ միլիոն երեք հարյուր քսանինը հազար երկու հարյուր քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

3.4 Պայմանագիրը կնքվում է առավելագույն գնով և առավելագույն քանակությունների համար և Պատվիրատուն վճարումը կատարում է իրեն փաստացի մատակարարված ապրանքի դիմաց՝ հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, իսկ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը պահանջ չներկայացվելու դեպքում՝ չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԵՆԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տոյժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Կրթելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Կյո գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Լենինգրայի 16
Հայրիզեստեբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150008842500100
ՀՎՀՀ 00009381

Տնօրենի/Վ. Բալաշյան
/ Ստորագրություն / Վ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Արթուր Պողոսյան» ԱԶ
ՀՀ, ք. Երևան, Զանաքեռ-2 շրջան,
Մ. Ավետիսյան 4 Փ 22 35
«Ինտելիգենսկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050632069521804
ՀՎՀՀ՝ 2653712

Տնօրենի/Վ. Բալաշյան
/ Ստորագրություն / Վ.Տ



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵՆՏԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՅԻՆՑՑ*

Հայկական N 1
2022թ. կնքված
ՀՏ-ԳՅԱԴՊՁԲ-22/09-1 ճանկացրող պայմանագրի

24/11

ՀՀ դրամ

Գ/հ	Միջանկյալ ճանկացրող դասակարգման (ԳՊՎ)	Անվանումը	ապրանքային կշռանքը, մակիշը և սրտադրողի անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագրի)	Չափումն սրտադրող	Միավորի գինը (ՀՀ դրամ)	գումար (ՀՀ դրամ)	Ըստիանու առավելագույն քանակը	Մատակարարման		Ժամկետը
									Հասցեն	Ենթակառավելագույն քանակը	
3	34331300/255	Շարժիչ փոկի ձգիչ հողովակ	Novinka	ԳԱՁ-3102 (406), Գագ 31105- Շարժիչ փոկի ձգիչ հողովակ	հատ	2300	11500	5	Ք.Երևան, Լենինգրայի ան 16	5	Պայմանագրի կնքելուց հետո՝ Պատվիրատուի հորից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը Սերկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում: մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը ՀՀ պատրված գումարի չափով պայմանագրի լուծվում է: ստաց դրամ է իրավունքով պարտավորություն:
4	34331300/256	Շարժիչ փոկի ձգիչ հողովակ	Novinka	Գագ 3102 կռայսելու - Շարժիչ փոկի ձգիչ հողովակ	հատ	19666.66667	59000	3	Ք.Երևան, Լենինգրայի ան 16	3	Պայմանագրի կնքելուց հետո՝ Պատվիրատուի հորից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը Սերկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում: մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը ՀՀ պատրված գումարի չափով պայմանագրի լուծվում է: ստաց դրամ է իրավունքով պարտավորություն:
5	34321130/51	Արժեպահանս կոճրակ դիմացի (կոմպլեկտ)	GM Stat	ԳԱՁ-3102 (406), Գագ 31105- Արժեպահանս կոճրակ դիմացի (կոմպլեկտ)	հատ	3580	17900	5	Ք.Երևան, Լենինգրայի ան 16	5	Պայմանագրի կնքելուց հետո՝ Պատվիրատուի հորից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը Սերկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում: մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը ՀՀ պատրված գումարի չափով պայմանագրի լուծվում է: ստաց դրամ է իրավունքով պարտավորություն:
6	34321130/52	Արժեպահանս կոճրակ դիմացի (կոմպլեկտ)	GM Stat	Գագ 3102 կռայսելու - Արժեպահանս կոճրակ դիմացի (կոմպլեկտ)	հատ	3583.333333	10750	3	Ք.Երևան, Լենինգրայի ան 16	3	Պայմանագրի կնքելուց հետո՝ Պատվիրատուի հորից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը Սերկայացնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում: մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 30.12.2022 թվականը ՀՀ պատրված գումարի չափով պայմանագրի լուծվում է: ստաց դրամ է իրավունքով պարտավորություն:

7	34311140/20	Շարժիչի հովացման փողոցի (կոմպլեկտ)	Balakov	ԳԱՂ-3102 (406), Գազ 31105 - Շարժիչի հովացման փողոցի (կոմպլեկտ)	հատ	3180	15900	5	Ք.Շրևան, Լենինգրայի ան 16	5	Պայմանագրերի փոխարինումը Սերկյայացվելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ դրում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագրից լուծվում է, առանց որևէ իրավունքի պարտավորություն:
8	34311140/21	Շարժիչի հովացման փողոցի (կոմպլեկտ)	Balakov	Գազ 3102 կոմպլեկտ - Շարժիչի հովացման փողոցի (կոմպլեկտ)	հատ	6333,333333	19000	3	Ք.Շրևան, Լենինգրայի ան 16	3	Պայմանագրերի փոխարինումը Սերկյայացվելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ դրում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագրից լուծվում է, առանց որևէ իրավունքի պարտավորություն:
21	34331300/267	Կցորդման աշխատանքային զվան	Gaz	ԳԱՂ-3102 (406), Գազ 31105 - Կցորդման աշխատանքային զվան	հատ	4700	23500	5	Ք.Շրևան, Լենինգրայի ան 16	5	Պայմանագրերի փոխարինումը Սերկյայացվելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ դրում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագրից լուծվում է, առանց որևէ իրավունքի պարտավորություն:
22	34331300/268	Կցորդման աշխատանքային զվան	Gaz	Գազ 3102 կոմպլեկտ - Կցորդման աշխատանքային զվան	հատ	4666,666667	14000	3	Ք.Շրևան, Լենինգրայի ան 16	3	Պայմանագրերի փոխարինումը Սերկյայացվելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ դրում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագրից լուծվում է, առանց որևէ իրավունքի պարտավորություն:
24	34331300/270	Կցորդման ռետինե խողովակ 105	Balakov	Գազ 3102 կոմպլեկտ - Կցորդման ռետինե խողովակ 105	հատ	1566,666667	4700	3	Ք.Շրևան, Լենինգրայի ան 16	3	Պայմանագրերի փոխարինումը Սերկյայացվելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ դրում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագրից լուծվում է, առանց որևէ իրավունքի պարտավորություն:
31	34331300/277	Տրի ընդարձակման տարային կապիտիչ	Loozar	ԳԱՂ-3102 (406), Գազ 31105 - Տրի ընդարձակման տարային կապիտիչ	հատ	1190	5950	5	Ք.Շրևան, Լենինգրայի ան 16	5	Պայմանագրերի փոխարինումը Սերկյայացվելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ դրում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագրից լուծվում է, առանց որևէ իրավունքի պարտավորություն:
33	42121190/2	Տրի պոմպ	Trackman	ԳԱՂ-3102 (406), Գազ 31105 - Տրի պոմպ	հատ	11000	55000	5	Ք.Շրևան, Լենինգրայի ան 16	5	Պայմանագրերի փոխարինումը Սերկյայացվելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ դրում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագրից լուծվում է, առանց որևէ իրավունքի պարտավորություն:

70	34331300/302	Սայատնիկ	Gaz	ԳԱԸ-3102 կոդայվեր- Սայատնիկ	հաստ	7333.333333	22000	3	Ք.Երևան, Լենինգրադայ ալև 16	3	Պայմանագրի կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացվելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ դրում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագրից լուծվում է: առանց որևէ իրավունքի վերադարձվելու:
71	34321130/53	Արզնավան կոնդակ հետևի (կոմպլեկտ)	GM Stat	ԳԱԸ-3102 (406), Գագ 31105- Արզնավան կոնդակ հետևի (կոմպլեկտ)	հաստ	6800	34000	5	Ք.Երևան, Լենինգրադայ ալև 16	5	Պայմանագրի կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացվելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ դրում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագրից լուծվում է: առանց որևէ իրավունքի վերադարձվելու:
73	34331300/303	Վենեց	Gaz	ԳԱԸ-3102 (406), Գագ 31105-Վենեց	հաստ	7080	35400	5	Ք.Երևան, Լենինգրադայ ալև 16	5	Պայմանագրի կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացվելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ դրում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագրից լուծվում է: առանց որևէ իրավունքի վերադարձվելու:
75	34331300/305	Մեկարկիչի բնորձք	Bate	ԳԱԸ-3102 (406), Գագ 31105- Մեկարկիչի բնորձք	հաստ	3800	19000	5	Ք.Երևան, Լենինգրադայ ալև 16	5	Պայմանագրի կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացվելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ դրում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագրից լուծվում է: առանց որևէ իրավունքի վերադարձվելու:
77	34331300/307	Մեկարկիչի ավտոմատ	Bate	ԳԱԸ-3102 (406), Գագ 31105- Մեկարկիչի ավտոմատ	հաստ	6500	32500	5	Ք.Երևան, Լենինգրադայ ալև 16	5	Պայմանագրի կնքելուց հետո՝ Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացվելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ դրում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագրից լուծվում է: առանց որևէ իրավունքի վերադարձվելու:
83	34331300/313	Գեներատոր ի փախոյալ	Bate	ԳԱԸ-3102 (406), Գագ 31105- Գեներատորի փախոյալ	հաստ	11000	55000	5	Ք.Երևան, Լենինգրադայ ալև 16	5	Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր անգամ պատվեր-հայտը ներկայացվելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, մինչև 30.12.2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընդ դրում մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագրից լուծվում է: առանց որևէ իրավունքի վերադարձվելու:
